Օրվա դասի պլան /Բաց դաս/ 6 /12/ 2023թ.

Վայոց ձոր մարզի Սարավանի հիմնական դպրոց

Դասվար ՝ Մարիամ Հակոբյան

Դասարան – 1- ին

Առարկա – Մաթեմատիկա

Թեմա – 1- ից մինչև 5 թվերը և նրանց կազմությունների ամրապնդում

Նպատակը – Թվանշանների և թվերի անվանումների կատարելագործում, թվերի կազմությունների ամրապնդում, միանիշ թվերի հետ գործողություններ կատարելու կարողությունների ձևավորում, առարկաները համեմատելու, խմբավորելու, համարակալելու կարողության զարգացում:Խմբային աշխատանքում բարեվարքության կանոնների պահպանում , կամային որակների զարգացում:

Վերջնարդյունքները – Համեմատի, տեսակավորի, համարակալի առարկաները ըստ հատկությունների, կռահի և պարզի տրված օրինաչափությունները:Ճանաչի և կարդա անցած թվերն, թվանշաններն, իմանա անցած թվերի կազմությունները, կատարի գումարման և հանման պարզագույն գործողությունները, ճանաչի գործողության նշանները ,գրանցի թվերի համեմատման արդյունքը նշանների միջոցով:

Դասի ընթացքը

Ուսուցիչ	Սովորող
. Ներկայացրեց դասի հիմնական նպատակը , ներկա դասալսողներին տեղեկացրեց մաթեմատիկայի դասաժամին առաջին դասարանի սովորողների նախնական ձեռքբերումները ,որ պետք է ներկայացվեր սահիկաշարի միջոցով:	. Ոգևորությամբ ներս մտան համակարգիչների դասասենյակ , սիրով պատրաստվեցին խմբային աշխատանքի և պատասխանեցին իրենց ուղղված հարցերին: Ներկայացան իրենց դասալսողներին անկաշկանդ:
. Դասը սկսեց երեխաների մուտքով՝ համակարգչի դասասենյակ: Երեխաներին նստեցրեց խմբերով՝ ընթացքում խմբային աշխատանք կատարելու նպատակով: Առաջին սահիկների ցուցադրման միջոցով կրկնել տվեց երկրաչափական պատկերների տեսակները, գույները: Ուղղի վրա առաջարկեց անվանել պատկերները՝ ըստ օրինաչափության, նաև հատկություններով:	. Առաջին սահիկների ցուցադրման ընթացքում ակտիվ անվանեցին երկրաչափական պատկերները, գույները, թվային ուղղի վրա կռահեցին պատկերների հերթականության օչինաչափությունը, տարբերություններ, հատկությունները: Կատարեցին խմբային աշխատանք՝ դասավորելով երկրաչափական պատկերները ըստ ուսուցչի հրահանգի:
. Առաջարկեց կատարել խմբային աշխատանք երկրաչափական պատկերները համարակալելու և անվանելու վերաբերյալ: Առաջադրեց հարցեր անցած թվերի վերաբերյալ , կազմակերպեց խաղ՝ <<Թվերի խառնաշփոթ>>, որի ժամանակ սովորողները պետք է շարվեին թվերի աճման և նվազման կարգով:	. Արտասանեցին թվանշանների վերաբերյալ ոտանավորները, աշխույժ խաղացին ուսուցչի առաջարկած խաղը, կատարեցին եզրահանգումներ թվերի աճման և նվազման վերաբերյալ: Աղյուսակների միջոցով անվանեցին իրենց անցած թվերի կազմությունները , վերլուծեցին սահիկաշարի ներկայացրած առաջադրանքները, լուծեցին խնդիրները:
. Կազմակերպեց տարբեր խաղային առաջադրանքներ՝ սահիկաշարի ցուցադրման ընթացքում՝<<Փակիր աչքերդ և անվանիր թվանշանները>> և այլն: Առաջադրեց առաջադրանքներ թվերի կազմությունների վերաբերյալ , խմբային աշխատանքում հետևեց կանոնների պահպանմանը, ոգևորեց երեխաներին առաջադրանքները կատարելու ընթացքում:Ավարտեց կշռադատման փուլը հարց ու պատասխանով , ամփոփեց դասը:	. Առաջադրանքները կատարելիս պահպանում էին խաղերի կանոնները, խմբային աշխատանքում՝ բարեվարքության կանոնները: Թվանշաններով խմբով աշխատելիս, կատարեցին համեմատություններ ,՝օգտագործելով համեմատություն նշանները: Ֆիզկուլտ դադարից հետո շարունակեցին ցուցադրվող սահիկների առաջադրանքների անհատական կատարումը: Պատասխանեցին ուսուցչի առաջադրած հարցերին, ամփոփեցին իրենց տպավորությունները :

Ո՞ր պատկերն
է տեղադրված
մյուս երկուսի
միջև:

1 2 3 4 5
Տրված թվերը կարդա ՝աճման կարգով՝ փոքրից
մեծ հերթականությամբ,ապա փորձի՛ր կարդալ
նվազման կարգով՝ մեծից փոքր :
6 7 8 9 10
4 , 9, 1, 3, 7, 10, 2, 5, 6, 8: